ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ARMEPS/PPCM ԵՎ LSFINANCE (ԳԳՕ) ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ, LSFINANCE (ԳԳՕ) ԵՎ CLIENT TREASURY ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/54

«20» դեկտեմբեր 2019թ.

ք.Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Լ. Լալայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը ամեն ամիս Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում): Յուրաքանչյուր ամիս հանձնման-ընդունման արձանագրությանը կից

Կատարողը Պատվիրատուին պետք է ներկայացնի կատարված գործողությունների մասին հաշվետվություն:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 19 700 000 (տասնինը միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը 12 ամսվա ծառայության մատուցման արժեքն է: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց, որի հաշվարկը կիրականացվի՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում

սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը,

ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02629081	«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011022887	ՀՀ24100023278500
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 01202055
ՖՆ գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Կ. Հարությունյան	---------- Լ. Լալայան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 20 » դեկտեմբեր 2019թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/54 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	72261160/506	Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT-TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ*	դրամ	19 700 000	1	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքելու օրվանից հետո 20-րդ օրվանից հաշված մինչև համաձայնագիրը կնքելու տարվա դեկտեմբերի 25-ը

***1. Գնումների պլանի փոփոխությունների համադրման սպասարկման ծառայություն**

Գնումների պլանի (այսուհետ՝ ԳՊ) փոփոխված տվյալները էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության (այսուհետ՝ PPCM) և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով PPCM համակարգից կուղարկվեն LSFinance (ԳԳՕ) համակարգ, որտեղ այդ տվյալները ավտոմատ կերպով կստուգվեն և սխալների բացակայության դեպքում կընդունվեն LSFinance (ԳԳՕ) համակարգի կողմից: Սխալների դեպքում՝ դրա արձանագրման պահին, ավտոմատ եղանակով PPCM համակարգին կուղարկվի անհամապատասխանության և անհայտ սխալների բովանդակության վերաբերյալ հստակ և մանրամասն տեղեկատվություն:

Գնումների պլանի փոփոխությունների համադրում: Գնումների պլանի (այսուհետ՝ ԳՊ) փոփոխված տվյալները էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության (այսուհետ՝PPCM) և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով PPCM համակարգից ուղարկվում են LSFinance (ԳԳՕ) համակարգ, որտեղ այդ տվյալները ավտոմատ կերպով ստուգվում են և սխալների բացակայության դեպքում ընդունվում LSFinance (ԳԳՕ) համակարգի կողմից: Տվյալների ընդունումից հետո երկու համակարգերում միաժամանակ կատարվում են գնումների պլանում կատարվող անհրաժեշտ բոլոր փոփոխությունները:

Ստորև ներկայացվում է համակարգերում համադրման գործընթացի ընդհանուր նկարագրությունը.

1. Պատվիրատուի ադմինիստրատորը PPCM համակարգում բացում է ԳՊ փոփոխման հայտը և հաստատում կամ մերժում է այն: Հաստատման դեպքում՝ PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է հաստատված տվյալները և ուղարկում է LSFinance (ԳԳՕ) համակարգ՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական հոդվածների: Իսկ մերժման դեպքում՝ PPCM համակարգը ԳՊ վարողի համար ստեղծում է առաջադրանք՝ փոփոխման հայտի մերժման վերաբերյալ:
2. Հաստատման դեպքում LSFinance (ԳԳՕ) համակարգը ստանում է տվյալները, մշակում է ըստ հոդվածների և յուրաքանչյուր հոդվածի համար տալիս է առանձին պատասխան: Եթե տվյալ հայտում առնվազն 1 հոդված մերժվում է, ապա և LSFinance (ԳԳՕ) և PPCM համակարգերում ամբողջ հայտը մերժվում է:
3. LSFinance (ԳԳՕ) համակարգը ընդունում է տվյալները: Ընդունման և մերժման դեպքերում PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է տվյալները և ուղարկում է PPCM համակարգ: Ընդունված տվյալների դեպքում PPCM համակարգը ԳՊ-ում կատարում է համապատասխան փոփոխություններ: Տվյալները ընդունված չլինելու դեպքում՝ մերժվում է ԳՊ փոփոխման հայտը, որից հետո ԳՊ վարողի համար ստեղծում է առաջադրանք՝ փոփոխման հայտի մերժման վերաբերյալ:

2. PPCM համակարգից LSFinance (ԳԳՕ) համակարգ պայմանագրի համադրման սպասարկման ծառայություն

Կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով PPCM համակարգից կուղարկվեն LSFinance (ԳԳՕ) համակարգ, որտեղ այդ տվյալներն ավտոմատ կերպով կստուգվեն և սխալների բացակայության դեպքում կընդունվեն LSFinance (ԳԳՕ) համակարգի կողմից: Սխալների դեպքում՝ դրա արձանագրման պահին, ավտոմատ եղանակով PPCM համակարգին կուղարկվի անհամապատասխանության և անհայտ սխալների բովանդակության վերաբերյալ հստակ և մանրամասն տեղեկատվություն:

PPCM համակարգից LSFinance (ԳԳՕ) համակարգ պայմանագրի ներմուծում: ARMEPS համակարգում մրցույթի շնորհումից հետո PPCM համակարգում գեներացվում է պայմանագրի սևագիր տարբերակը: Գնումների համակարգողը (այսուհետ՝ ԳՀ) լրացնում է պայմանագրի անհրաժեշտ դաշտերը և պահպանում կատարված փոփոխությունները: Որից հետո ուղարկում է պայմանագիրը հաստատման: PPCM համակարգում հաստատման բոլոր փուլերն անցնելուց հետո համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է պայմանագրի տվյալները և այն ուղարկում LSFinance (ԳԳՕ) համակարգ:

Ստորև ներկայացվում է համակարգերում համադրման գործընթացի ընդհանուր նկարագրությունը.

1. ԳՀ-ը PPCM համակարգում լրացնում է պայմանագրի դաշտերը, պահպանում է փոփոխությունները և ուղարկում հաստատման:
2. ԳՀ ղեկավարը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ: ԳՀ ղեկավարը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման դեպքում Պատվիրատուի ադմինը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ, իսկ մերժման դեպքում՝ ԳՀ-ը ստանում է ծանուցում մերժման վերաբերյալ:
3. Հաստատման դեպքում՝ Պատվիրատուի ադմինը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ: Պատվիրատուի ադմինը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման դեպքում PPCM և LSFinance (ԳԳՕ)

համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է տվյալները և կցված PDF ֆայլով ուղարկում LSFinance (ԳԳՕ) համակարգ, իսկ մերժման դեպքում՝ ԳՀ-ը ստանում է ծանուցում մերժման վերաբերյալ:

4. LSFinance (ԳԳՕ) համակարգը ընդունում կամ մերժում է պայմանագրի տվյալները: Ընդունման դեպքում LSFinance (ԳԳՕ) համակարգը գեներացնում է տվյալ պայմանագրի համար ունիկալ կոդ, որը տրամադրում է PPCM համակարգին տվյալ պայմանագրի հետագա փոփոխությունների համար: Պայմանագրի փոփոխության դեպքում PPCM համակարգից բացի պայմանագրի փոփոխված տվյալներից LSFinance (ԳԳՕ) համակարգ տրամադրվում է նաև նախկինում LSFinance (ԳԳՕ) համակարգում գեներացված տվյալ պայմանագրի ունիկալ կոդը:

5. Տվյալների հաստատման դեպքում ԳՊ-ում պայմանագրի գումարի չափով հաշվարկվում է ծախս, իսկ սխալների առկայության դեպքում՝ PPCM և LSFinance(ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է չընդունված տվյալները, ուղարկում PPCM համակարգ և ԳՀ-ն ստանում է ծանուցում մերժման վերաբերյալ:

3. LSFinance (ԳԳՕ) համակարգում գնումների պլանի ներմուծում:

Գնումների պլանը LSBudget համակարգում հաստատվելուց հետո եռօրյա ժամկետում ներմուծել LSFinance (ԳԳՕ) համակարգ:

4. ԳՄԱ կոդերի հերթական համարների անսահմանափակություն:

LSFinance (ԳԳՕ) համակարգի գնումների պլանի և պայմանագրերի բազաներում ապահովել ԳՄԱ կոդերի հերթական համարների անսահմանափակություն:

5. Հեռախոսային խորհրդատվության տրամադրում

LSFinance (ԳԳՕ) համակարգի շահագործման գծով հեռախոսային խորհրդատվության տրամադրում << ֆինանսների նախարարության աշխատակիցներին, իսկ CLIENT - TREASURY համակարգի գծով՝ պետական կառավարման մարմինների աշխատակիցներին:

6. Համակարգի բնականոն աշխատանքի ապահովում

LSFinance (ԳԳՕ) համակարգի շահագործման ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված խնդիրների վերհանում և համակարգի բնականոն աշխատանքի ապահովում:

7. Մեկ անձ գնման ձևով հաշվետվությունների արտահանում և տրամադրում

Յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ LSFinance (ԳԳՕ) համակարգում առկա մեկ անձ (ՄԱ) գնման ձևով հաշվետվությունների արտահանում և դրա՝ մինչև տվյալ շաբաթվան հաջորդող շաբաթվա 1-ին աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարության xmltreasury կատալոգում տեղադրում:

Պայմանագրի պատշաճ իրականացման համար Պատվիրատուն պետք է Ծառայություններ մատուցողին տրամադրի հետևյալը.

1. Համակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը,
2. PPCM-ի գործունեության և տեխնիկական բնույթի այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվություն՝ պայմանագրի գործողության ողջ ընթացքում,
3. Պայմանագրի պայմանների կատարման նպատակով մուտքի տրամադրում իր տարածքներ,
4. Անհրաժեշտ հարմարությունները և տեխնիկական միջոցներին հասանելիությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02629081	«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011022887	ՀՀ24100023278500
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 01202055
ՖՆ գլխավոր քարտուղար՝	
_____ Վ. Հարությունյան	_____ Լ. Լալայան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 2
« 20 » դեկտեմբեր 2019թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/54 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
« 20 » դեկտեմբեր 2019թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀՇՁԲ-19/54 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

20.12.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/54» ծածկագրով պետության կարիքների համար Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան

« 7 » փետրվար 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից և «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Լ. Լալայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող») մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածով և 20.12.2019թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/54» գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին

1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայության մատուցման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 08.01.2020թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը: Ընդ որում, մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2. Այլ պայմաններ

2.1. 20.12.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/54» ծածկագրով պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	Հ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02629081	«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011022887	Հ/Հ՝ 24100023278500
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 01202055
ՖՆ գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Վ. Հարությունյան	_____ Լ. Լալայան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված
20.12.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/54» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
« 7 » փետրվարի 2020թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների ի պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			Մարտ	Փետրվար	Հունվար	Դեկտեմբեր	Նոյեմբեր	Հոկտեմբեր	Սեպտեմբեր	Օգոստոս	Հուլիս	Հունիս	Մայիս	Ընդամենը
1	72261160/506	Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT-TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	4925000	4925000	9850000	9850000	9850000	14775000	14775000	14775000	19700000	19700000	19700000	19700000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011022887
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

---------- Վ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
Հ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 24100023278500
ՀՎՀՀ՝ 01202055
Տնօրեն՝

---------- Լ. Լալայան
/ստորագրություն/ Կ.Տ